Վրաստանի օրենք

Խտրականության բոլոր տեսակների վերացման վերաբերյալ

Հոդված 1: Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակն է վերացնել խտրականության բոլոր **տեսակներ**ը և ապահովել Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի իրավունքների հավասար ապահովում՝ անկախ նրա ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, տարիքից, քաղաքացիությունից, ծագումից, ծննդավայրից, բնակության վայրից, գույքային կամ սոցիալական վիճակից, կրոնից կամ հավատքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական պատկանելությունից, մասնագիտությունից, ընտանեկան կարգավիճակից, առողջական վիճակից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնությանը եւ ինքնադրսեւորմանը, քաղաքական կամ այլ հայացքներից, կամ այլ բնութագրերից.

Հոդված 2: Խտրականության հասկացությունը: Խտրականության արգելումը

1. Վրաստանում արգելված է բոլոր տեսակի խտրականություն:

2. Բացահայտ խտրականությունը այնպիսի վերաբերմունք կամ պայմանների ստեղծումն է, որոնց դեպքում անձի իրավունքները՝ նախատեսված Վրաստանի օրենսդրությամբ և այս օրենքի առաջին հոդվածով, խախտվում են, կամ ինչ-որ հատկանիշներով դնում են նրան անբարենպաստ պայմանների մեջ՝ նմանատիպ պայմաններում գտնվող այլ անձանց համեմատությամբ, կամ հավասար պայմանների մեջ է դնում ի սկզբանե անհավասար պայմաններում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման վերաբերմունքը կամ պայմանների ստեղծումը ծառայում է օրենքով նախատեսված հասարակական կարգը եւ բարոյականությունը պահպանելու նպատակին, ունի օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ օգտագործվող միջոցները համաչափ են այդ նպատակին հասնելուն:

2. Բացահայտ խտրականությունը այնպիսի վերաբերմունք կամ պայմանների ստեղծումն է, որոնց դեպքում անձի իրավունքները՝ նախատեսված Վրաստանի օրենսդրությամբ և այս օրենքի առաջին հոդվածով, խախտվում են, կամ ինչ-որ հատկանիշներով դնում են նրան անբարենպաստ պայմանների մեջ՝ նմանատիպ պայմաններում գտնվող այլ անձանց համեմատությամբ, կամ հավասար պայմանների մեջ է դնում ի սկզբանե անհավասար պայմաններում, բացառությամբ այն

դեպքերի, երբ նման վերաբերմունքը կամ պայմանների ստեղծումը ծառայում է օրենքով նախատեսված հասարակական կարգը եւ բարոյականությունը պահպանելու նպատակին, ունի օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ օգտագործվող միջոցները համաչափ են այդ նպատակին հասնելուն:

3 [1]. Ճնշումը՝ անձին ցանկացած հիմքով հետապնդումն է, հարկադրանքը և/կամ վատ վերաբերմունքը ցանկացած պատճառով, որն նպատակ ունի կամ ուղղված է մարդու արժանապատվությունը նվաստացնելուն, և նրա համար ստեղծում է ահաբեկող, թշնամական, ստորացնող, արժանապատվությունը նվաստացնող կամ վիրավորական իրավիճակ:

3 [2]. Սեքսուալ ճնշումը՝ սեռական բնույթի ցանկացած անցանկալի բանավոր, ոչ բանավոր կամ ֆիզիկական պահվածքն է, որն ուղղված է մարդու արժանապատվությունը նվաստացնելուն կամ նրա համար ստեղծում է ահաբեկող, թշնամական, ստորացնող, արժանապատվությունը նվաստացնող կամ վիրավորական իրավիճակ:

4. Բազմաթիվ հատկանիշներով խտրականությունը՝ երկու կամ ավելի հատկանիշներով խտրականությունն է:

5. Արգելվում է ցանկացած գործողություն, որն ուղղված է անձին հարկադրելուն, հրահրելուն կամ խթանման, կամ նրան հանձնարարություն տալ իրականացնել երրորդ անձանց հանդեպ սույն հոդվածով նախատեսված խտրականությունը:

6. Սույն հոդվածում նշված պայմաններում տեղի ունի խտրականություն՝ անկախ այն բանից, թե արդյոք անձը իրականում ունի սույն օրենքի առաջին հոդվածով նախատեսված նշանը, որի պատճառով նրա նկատմամբ ձեռնարկվել է խտրական գործողություն:

7. Խտրականությունը անհատական և ժամանակավոր իրադարձություններ չեն, որոնք մշակված են փաստացի հավասարության աջակցության համար կամ դրան հասնելու նպատակով, հատկապես սեռի, հղիության և մայրության հարցերում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ:

8. Որպես խտրականություն չպետք է դիտարկվեն ոչ մի առանձնահատկություն, բացառություն կամ նախապատվություն, որոնք անհրաժեշտ են հատուկ պայմաններ պահանջող որոշակի աշխատանքների, գործունեության տեսակի կամ ոլորտի համար:

9. Թույլատրվում են տարբեր ընթացակարգեր, պայմանների ստեղծում և/կամ իրավիճակներ, եթե տեղի ունի պետության բացարձակ հետաքրքրությունը և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է պետության միջամտությունը :

10. Հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառվում է նաև.

ա.) աշխատանքային և նախնական պայմանագրային հարաբերություններում, այդ թվում՝

ա. ա) նախնական պայմանագրային հարաբերությունների ընտրության չափանիշներին և անձնակազմի հավաքելու պայմաններին, ինչպես նաև կարիերային աճի **մանչելիությանը**, մասնագիտական հիերարխիայի բոլոր մակարդակներում՝ անկախ գործունեության ոլորտից,

ա.բ) մասնագիտական հիերարխիա կողմնորոշման բոլոր մակարդակներում մասնագիտական կողմնորոշման, որակավորման, մասնագիտական պատրաստման և վերապատրաստման բոլոր ձևերի (ներառյալ գործնական մասնագիտական փորձի) բոլոր ձևերի **մանչելիությանը**,

ա.գ) զբաղվածության, աշխատանքի, աշխատանքի վարձատրության եւ աշխատանքային հարաբերությունների դադարեցման պայմաններին;

բ) աշխատողների կազմակերպության, գործատուների կազմակերպության կամ այնպիսի կազմակերպության անդամակցությանը և գործունեությանը, որի անդամները պատկանում են որոշակի մասնագիտական խմբին, ներառյալ այդ կազմակերպություններից օգուտներ ստացողները.

գ) սոցիալական պաշտպանությանը եւ առողջության պահպանմանը, կրթությանը, ապրանքների եւ ծառայությունների մատակարարմանը, այդ թվում՝

գ. ա) սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ապահովությանը, սոցիալական նպաստների և այլնի վերաբերյալ,

գ. բ) առողջապահական ծառայություններին,

գ. գ) կրթության հասանելիությանը,

գ.դ) հանրամատչելի ապրանքների և ծառայությունների ստացմանը (ներառյալ կացարանը):

11. Սույն հոդվածի 10-րդ կետի «գ» ենթակետի շրջանակներում հավասար վերաբերմունքի սկզբունքը, հաշվի առնելով նույն պարբերության «գ. ա» - «գ. դ» ենթակետերում նշված ոլորտների առանձնահատկությունները, կիրառվում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններին համապատասխան:

Վրաստանի № 4281 օրենք առ 19 փետրվարի 2019 թվականի - կայք, 25.02.2019 թ.

Հոդված 3: Օրենքի կիրառման ոլորտը

Սույն օրենքի պահանջները տարածվում են բոլոր գործունեության ոլորտների պետական հիմնարկների, կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների վրա, բայց միայն այն դեպքում, եթե այդ գործողությունները չեն կարգավորվում մեկ այլ իրավական ակտով, որոնք համապատասխանում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերին:

Հոդված 4. Խտրականության վերացման ուղղված միջոցառումները

Խտրականությունը վերացնելու համար բոլոր հաստատությունները պարտավոր են:

ա) Իրենց գործունեությունը, ինչպես նաև իրավական ակտերը եւ ներքին նորմատիվ ակտերը՝ եթե այդպիսիք առկա են, համապատասխանեցնել սույն օրենքին եւ այլ խտրականության դեմ պայքարի օրենսդրությանը,

բ) անհապաղ և արդյունավետորեն արձագանքել բոլոր ենթադրյալ խտրականության փաստերին,

գ) Վրաստանի օրենսդրության և ներքին կանոնակարգին համապատասխան, խտրականության փաստը հաստատելու դեպքում պատասխանատվությունը դնել վիրավորող անձի վրա և ապահովել խտրականության հետևանքների վերացում՝ երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Հոդված 5: Սույն օրենքի մեկնաբանման կարգը և շրջանակները

1. Սույն օրենքի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն ենթադրի կրոնական միության կրոնական իրավունքներ սահմանափակող (այդ թվում՝ կրոնական ծառայության իրավունքը), այն պայմանով, որ այդ իրավունքները չեն խախտում հասարակական կարգը, հասարակական անվտանգությունը և/կամ այլոց իրավունքները:

2. Սույն օրենքի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն հակասի Վրաստանի Սահմանադրությանը և Վրաստանի Պետության և «Վրաստանի առաքելական ավտոկեֆալ ուղղափառ եկեղեցու» միջև սահմանադրական համաձայնագրին:

3. Խտրականության վերացման նպատակով իրականացվող միջոցներն, կամ սույն օրենքի առաջին հոդվածով նախատեսված անձի կամ անձանց խմբի հանդեպ խտրականության կամ մարդու իրավունքների իրացման/պաշտպանության համար ձեռնարկված միջոցները՝ չպետք է խախտեն հասարակական կարգը, հասարակական անվտանգությունը և/կամ այլոց իրավունքները:

4. Արգելվում է սույն օրենքով սահմանված իրավունքներն օգտագործել այնպես, որ այն ատելությաւն պատճառ հանդիսանա կամ հրահրի ատելություն առաջացնել՝ սույն օրենքի առաջին հոդվածով նախատեսված որևէ իրավունք ունեցող անձերի կամ անձանց խմբերի միջև:

5. Սույն օրենքի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն չեղյալ է հայտարարում Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացված միջազգային համաձայնագրերով սահմանված իրավունքները կամ ազատությունները, կամ ավելի ընդլայնված սահմանափակումներ է դնում, քան այն նախատեսված է պայմանագրով:

Հոդված 6: Խտրականության վերացման և հավասարության ապահովմամ հսկողության իրականացում

1. Խտրականության վերացման և հավասարության ապահովմամ հսկողությունը իրականացնում է Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը:

2. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը՝ Վրաստանի օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար.

ա) քննարկում է իրենց խտրականության զոհ համարող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ անձանց խմբի դիմումը և բողոքը,

բ) դիտարկում է խտրականության փաստը այնպես, ինչպես այն ներկայացված է դիմումում կամ բողոքում, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ և տալիս է համապատասխան առաջարկություններ,

գ) պատրաստում և համապատասխան հիմնարկ կամ անձին ուղարկում՝ խտրականության կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերի վերաբերյալ ընդհանուր առաջարկներ,

դ) սույն օրենքի նպատակների համար մշակում է կարծիքներ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ և դրանք օրենսդրական առաջարկի ձևով ներկայացնում Վրաստանի խորհրդարան,

ե) առաջարկում է խտրականության զոհին և խտրական գործողություն կատարող ենթադրյալ անձին գործը ավարտել կողմերի համաձայնությամբ,

զ) եթե պարզվի, որ անհնար է կարգավորվել գործը փոխադարձ համաձայնությամբ, և արկա են խտրականությունը հաստատող բավարար նյութեր, դիմում է համապատասխան հաստատությանը կամ

անձին՝ խտրականության զոհին երաշխավորված իրավունքները վերականգնելու առաջարկությամբ,

Է) իրավունք ունի, որպես շահագրգիռ կողմ, Վրաստանի Վարչական դատավարության օրենսգրքին համապատասխան՝ դիմել դատարան և պահանջել վարչական մարմնից վարչական ակտեր կամ գործողություններ ձեռնարկել, եթե վարչական մարմինը չի արձագանքել առաջարկությանը, կամ առաջարկությունը չի ընդունվել, իսկ արկա խտրականությունը հաստատող ապացույցները բավարար են,

ը) արձանագրում և վերլուծում է խտրականության փաստերի վերաբերյալ վիճակագրական տվյալները,

ի) միջոցներ է ձեռնարկում խտրականության հարցերով հանրության իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ,

ժ) համագործակցում է խտրականության հարցերով միջազգային պետական և հասարակական կազմակերպությունների, տեղական հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Հոդված 7: Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցը

1. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը տարին մեկ անգամ մշակում և հրապարակում է՝ երկրում խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության իվիճակի վերաբերյալ հատուկ զեկույց:

2. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցը պետք է պարունակի՝ երկրում խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վերաբերյալ ընդհանուր գնահատականներ, եզրակացություններ և առաջարկություններ, ինչպես նաև տեղեկատվություն էական խախտումների և ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

Հոդված 8. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից գործի քննությունը

1. Մարդու իրավունքների պաշտպանին դիմումով/բողոքով դիմող անձը պետք է նշի այն փաստերը, որոնք հիմք են տալիս ենթադրելու խտրական գործողությունները և պետք է ներկայացնի համապատասխան նյութեր:

2. Անձը ներկայացնում է Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին փաստեր և համապատասխան ապացույցներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու խտրական գործողություններ, որից հետո

ենթադրյալ խտրական գործողությունը կատարած անձը կրում է այն ապացուցման բեռը, որ խտրականություն տեղի չի ունեցել:

3. Եթե Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը անհրաժեշտ համարի, նա իրավասու է նշանակել բանավոր լսումներ և առաջարկել կողմերին ավարտել վեճը հաշտության համաձայնությամբ: Գործը հաշտության համաձայնությամբ ավարտելու դեպքում Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանն վերահսկում է կարգավորման ակտով սահմանված պարտավորությունների կատարումը:

4. Յուրաքանչյուր վարչական, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ (այդ թվում՝ դատախազությունը, քննչական դատական մարմինը) պարտավոր է 10 օրացուցային օրվա ընթացքում Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել փաստաթղթեր, բացատրություններ, պարզաբանումներ և գործին առնչվող այլ տեղեկություններ: Եթե տեղեկատվությունը ձեռք է բերվում կամավոր կերպով մասնավոր անձից, ապա իր պահանջով նրան կարող են փոխհատուցվել տեղեկատվության փոխանցման հետ կապված պատճենահանման և փոստային ծառայությունների ծախսերը:

5. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը քննարկում է դիմումը/բողոքը՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից որոշման կայացումը

1. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը կասեցնում է գործի վարույթը, եթե ենթադրյալ խտրականության նույն փաստով՝

ա) վեճը քննարկվում է դատարանում,

բ) սկսված է վարչական վարույթ,

գ) իրականացվում էքրեական հետապնդում:

2. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը ավարտում է վարույթը, եթե ենթադրյալ խտրականության նույն փաստով՝

ա) գործով առկա է դատական որոշում,

բ) դիմումի/բողոքի քննարկման արդյունքում խտրականության փաստը չի հաստատվել:

3. Եթե Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին տրված դիմումի/բողոքի քննության արդյունքում հաստատվել է խտրականության փաստը, և խտրականության հետեվանքները չեն վերացվել, ապա մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, իրականացնում է խախտված

հավասարության վերականգնման վարույթ՝ հանձնարարական տալով՝ այդ միջոցների իրականացման վերաբերյալ:.

Հոդված 10: Դատարան հայցով դիմելը

1. Ցանկացած՝ իրեն է խտրականության զոհ համարող անձ, իրավունք ունի դիմել հայցով դատարան այն անձի/հաստատության դեմ, ով, իր կարծիքով, իր նկատմամբ խտրականություն է դրսևորել և պահանջել բարոյական և/կամ նյութական վնասի փոխհատուցում:

2. Դատարան հայցով դիմելու կարգը սահմանված է Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Հոդված 11: Երրորդ անձանց մասնակցությունը գործի քննության գործընթացին

Այն կազմակերպությունը, հաստատությունը կամ միությունը, որի գործունեությունը ներառում է խտրականությունից պաշտպանելը, իրավունք ունի դիմել Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին՝ սույն օրենքով նախատեսված գործի քննության գործընթացում երրորդ կողմերի ներգրավելու միջնորդությամբ:

2. Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանն իրավասու է բավարարել սույն հոդվածի առաջին կետով նախատեսված միջնորդությունը՝ միայն իրեն խտրականության զոհ համարող անձի համաձայնությամբ:

Հոդված 12 Անձանց պաշտպանությունը օրենքով սահմանված ընթացակարգերը իրականացնելու ընթացքում

1. Արգելվում է ցանկացած անձի հանդեպ դրսեվորել որևէ բացասական վերաբերմունք, կամ ճնշում գործադրել նրա վրա այն պատճառով, որ նա՝ իրեն խտրականությունից պաշտպանելու համար դիմել է համապատասխան մարմնին կամ համագործակցել նրա հետ:

2. Սույն օրենքով ընթացակարգերը կատարելիս և դրանից հետո՝ համապատասխան մարմինը ապահովում է խտրականության զոհին վերաբերող անձնական տվյալների գաղտնիությունը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Վրաստանի օրենքին համապատասխան: Արգելվում է այդպիսի տեղեկություններ փոխանցել երրորդ կողմերին առանց խտրականության զոհի համաձայնության, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

3. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, խտրականության զոհը իրավունք ունի դիմել Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանին:

Հոդված 13: Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլի

Քութայիսի,
2 մայիսի 2014 թ.
N2391-IIს